

## Ռուզաննա Մովսեսյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

### ԵՐԿՐԱՊԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋՈՎԱՏՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԴՎԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

1988 թ. փետրվարին Արցախում վերսկսված ազգային-ազատագրական պայքարը հետզհետե ընդլայնվում և համաժողովրդական բնույթ էր ընդունում: Այդ պայքարին հենց սկզբից սատար կանգնեցին Երկրապահ կամավորական ջոկատները: Այդ ջոկատները ստեղծվել էին 1988 թ. սունգայիթյան ցեղասպանությունից հետո: Ինքնապաշտպանական կամավորական ջոկատներ էին կազմակերպվում ամբողջ Հայաստանում և Արցախում, որոնց թիվը անցնում էր 500-ից:

Հենց սկզբից պայքարը լայն թափ ստացավ Հյուսիսային Արցախում, մանավանդ Գետաշեն-Շահումյանում: Գետաշենցիները երդվեցին հավատարիմ մնալ իրենց հողին ու ջրին: Թուրք ազերիները Գետաշենը և Խանլարի շրջանի մեջ մտնող մյուս հայկական բնակավայրերը շրջապատել էին բոլոր կողմերից: Գետաշենն իր վրա էր վերցրել ենթաշրջանի հայկական գյուղերի պաշտպանությունը: Գետաշենի ենթաշրջանի համար ստեղծված այդ օրհասական վիճակի մասին հաղորդվեց Երևանի Թատերական հրապարակում: Հայրենասիրական ոգով լեցուն հայ առաջին կամավորական ջոկատները մեկնեցին Գետաշեն: Այդ ժամանակ Հյուսիսային Արցախը գերմարդկային ճիգերով շարունակում էր դիմակայել հակառակորդին<sup>1</sup>:

1990 թ. հունվարի 14-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընդունած որոշումով լուծարվեց Շահումյանի շրջանը և այն միացվեց նորաստեղծ Գերանբոյի շրջանին: Դրանից հետո խորհրդային զինվորական ուժերի կողմից արգելվեց ուղղաթիռների թռիչքը Գետաշեն և Շահումյան: Խիստ դժվարացել էր նոր ջոկատների այնտեղ մեկնելը և ընկերներին հերթափոխելը: Ադրբեջանի ազգային ճակատին հաջողվեց Գետաշենի ենթաշրջանի Ազատ և Կանոն գյուղերի բնակիչներին բռնահանել: Դա կատարվեց խորհրդային զինվորների ամենագործուն աջակցությամբ: Նրանք զինաթափելով այդ գյուղերի ինքնապաշտպանական ջոկատները՝ ըստ էության կատարել էին Ադրբեջանի իշխանությունների պահանջը: Գետաշեն-Շահումյանի պես ծանր վիճակում էին գտնվում նաև Բերդաձորն ու Հադրութի շրջանը: Այդ տարածքների հայկական բնակավայրերը ռմբակոծվում էին զենքի տարբեր տեսակներով: Երևանից ու Գորիսից ուղղաթիռներով կամավորական ջոկատներ էին մեկնում այնտեղ՝ իրենց հետ տանելով պաշտպանական միջոցներ և սննդամթերք:

Երկրապահ կամավորական ջոկատների համար չափազանց ծանր տարի էր մանավանդ 1991 թվականը, երբ արդեն Արցախը և Գետաշեն-Շահումյանը լիովին շրջափակված էին և կտրված Հայաստանից: Ադրբեջանի իշխանություններն օր օրի ուժեղացնում էին ճնշումը Գետաշեն-Մարտունաշենի վրա և տեղի բնակչությանը ստիպում հեռանալ հայրենի օջախներից: Այդ մասին Գետաշենի ղեկավարությունը Հայաստանի իշխանություններին և ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին տեղյակ էր

<sup>1</sup> Տես **Հրանտ Աբրահամյան**, Մարտնչող Արցախը, գիրք Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 260:

պահել դեռևս 1990 թ. սեպտեմբերին<sup>1</sup>: Մինչ այդ, նույն թվականի հունվարին կոչ արվեց հայ ժողովրդին կազմակերպել կամավորական ջոկատներ և պաշտպանել Գետաշեն-Շահումյանն ու Արցախը<sup>2</sup>: Թատերական հրապարակում անընդհատ կոչեր էին հնչում կազմակերպել երկրապահ ջոկատներ և մեկնել Գետաշեն-Շահումյանն ու գորավիզ լինել տեղի հայերին<sup>3</sup>:

Արցախը բռնազավթելու և Գետաշենն ու Մարտունաշենը հայաթափելու համար դեռևս 1990 թվականին Ադրբեջանի ՆԳ նախարարությունում կազմվել է «Կոլցո» (օղակ) ծածկագիր անունն ունեցող ռազմական գործողությունների մի սարսափելի ծրագիր: Այդ ծրագիրը պաշտպանել է նաև ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ, գեներալ-գնդապետ Բ. Գրոմովը: Համաձայն «Կոլցո» գործողության, 1991 թ. ապրիլի 29-ին սկսվեց Գետաշենի և Մարտունաշենի հրթիռակոծումը: Այդ գործողության իրագործման հիմնական պատասխանատուն Ադրբեջանի ՆԳ նախարար Մ. Ասադովն էր<sup>4</sup>: Ազերի օմոնականների այդ զարհուրելի գործողություններից Գետաշեն-Մարտունաշենի բնակչությանը, որի թիվը հասնում էր մոտ 3315-ի, պաշտպանում էին հայ կամավորական ջոկատները՝ տեղական ուժերի հետ միասին: Ադրբեջանի խորհրդային այդ ուժերը նոր հարձակում սկսեցին ապրիլի 30-ին՝ իբր Գետաշենում ու Մարտունաշենում գտնվող կամավորական ջոկատներին զինաթափելու համար: Այդ ժամանակ Գետաշենի ենթաշրջանում էին գտնվում «Արաբո», «Ալաշկերտ», «Տիգրան Մեծ», «Գարեգին Նժդեհ», «Դավիթ Բեկ», «Նոր կյանք», «Մալաթիա», «Գառնի», «Զորավար Անդրանիկ» (Երևան), «Սասուն» (Հրազդան) և այլ ջոկատներ: Հայաստանից և Արցախից նորանոր երկրապահ ջոկատներ էին մեկնում Գետաշեն: Թե՛ տեղի բնակիչները և թե՛ օգնության եկած երկրապահները խիզախաբար դիմադրում էին: Մարտունաշենի մարտերում իր մկրտությունը ստացավ «Արաբո» երկրապահ կամավորական ջոկատը: Գլխավոր հրամանատարության հանձնարարությամբ «Արաբո» ջոկատը միշտ հայտնվում էր անհրաժեշտ տեղում, մասնակցում հարձակողական գործողություններին և ազատագրած բնակավայրերը հանձնում դիրքապահներին ու հեռանում: «Արաբոն» առանձնապես հայտնի դարձավ Մարտունաշենում 1990 թվականի սեպտեմբերի 29-ին: Այդ օրըթուրք ազերիները փորձեցին մըտնել Մարտունաշեն: Կատաղի մարտը շարունակվեց 20 րոպե: Ազերիները մարտադաշտում թողնելով 28 զոհ՝ խուճապահար փախուստի դիմեցին: Երկրապահները տվեցին մեկ զոհ, սակայն հարուստ ռազմավար ձեռք բերեցին: Հետո Մարտունու մատույցներում երևացին կարմիր բերետավորները և գրավեցին պահակակետը: Սակայն նրանք ընկան շրջափակման մեջ: Գերվեցին խորհրդային մեկ գնդապետ և մեկ լեյտենանտ:

«Կոլցո» գործողության համաձայն Գետաշեն մտան Անդրկովկասյան ռազմական օկրուգի չորրորդ բանակի զորամասերը՝ իրենց ետևից բերելով ազերի օմոնականների ավազակախմբեր: Նրանց դեմ Գետաշենցիների և կամավորական ջոկատների հերոսական պայքարը գլխավորում էր Թաթուլ Կրպեյանը: Հայ ինքնապաշտպանները գերված զինվորականներին փոխանակում են 27 պատանդ Գետաշենցիների հետ: Մարտական գործողությունների ընթացքում զոհվեցին ինքնապաշտպանա-

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», № 107, 15 մայիսի, 1991:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 84, գ. 131, թ. 78:

<sup>3</sup> Տե՛ս «Արցախ», № 12, 16 հունվարի, 1990:

<sup>4</sup> Տե՛ս Депортация населения армянских сел НКАО, прилегающих районов, апрель-июнь, 1991, Ереван:

կան ջոկատի մարտիկներ Թաթուլ Կրպեյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարյանը, Մարտունաշենի պաշտպանության ղեկավար Սիմոն Աջիգյոզյանը, Ջարգանդ (Յրաջ) Դանիելյանը և ուրիշներ:

Համառ պայքարից հետո՝ 1991 թ. մայիսի 6-ի գիշերը. Գետաշենի ինքնապաշտպանական ուժերի խորհրդակցությունը ստիպված էր զենքն ու փամփուշտը դուրս բերել գյուղի տարածքից: Ըստ որում՝ 300-350 երկրապահ կամավորականները պետք է Գետաշենից հեռանային խմբերով, երեք հերթով, գիշերը: Նրանք պետք է հեռանային դեպի Քյափազ սարը: Երկրապահ կամավորական ջոկատները, որոնք մոտ 2 տարի պաշտպանել են Գետաշենի ենթաշրջանը, լեռնային ճանապարհներով հեռացան Շահունյանի կողմը, իսկ բնակչությունը բռնազաղթվեց Արցախ-Հայաստան: 41 զոհվածներից 18-ը Հայաստանից մեկնած երկրապահ ազատամարտիկներ էին<sup>1</sup>:

Թե՛ Հայաստանը և թե՛ աշխարհասփյուռ հայությունը շարունակում էր սատար կանգնել Արցախին: Անընդհատ երկրապահ կամավորական ջոկատներ էին մեկնում Լեռնային Ղարաբաղ: 1992 թ. գարնանը Արցախում, բացի տեղում կազմավորված ինքնապաշտպանական ջոկատներից, կային Հայաստանից այնտեղ մեկնած տասնյակ ջոկատներ, որոնց գործողությունների համակարգումը դարձել էր կարևոր հարց: Այդ նույն թվականի մարտին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ստեղծեց պաշտպանության խորհուրդ և հանրապետության ընդհանուր ուժերի հրամանատարության տակ դրեց ինքնապաշտպանության բոլոր կազմավորումները<sup>2</sup>:

1992 թ. գարնանը խորհրդային բանակը Հյուսիսային Արցախի զգալի մասը հանձնելով Ադրբեյջանին՝ հեռանում էր: Ինքնապաշտպանական շատ ջոկատներ ստիպված էին դուրս գալ ընդհատակից: Հիմնական խնդիրը դարձավ վերացնել Ստեփանակերտի շրջափակումը և ադրբեյջանական բնակավայրերում տեղակայված կրակակետերը: Ներքին հրահանգավորում եղավ պարտիզանական պայքարի փորձ ունեցող երկրապահ կամավորական ջոկատներին՝ փոխհամաձայնեցված հակահարված հասցնել հակառակորդին: Այս հրահանգը վերաբերում էր Արցախի բոլոր երկրապահ կամավորներին: Եթե Մարտակերտի շրջանում գործող ինքնապաշտպանական ջոկատները Կիչանի, Չլդրանի, Հարությունգոմերի և Պողոսգոմերի տարածքներում խիզախորեն դիմակայում էին հակառակորդին, ապա Ասկերանի, Մարտունու և Հադրութի կամավորական ջոկատները՝ Հայաստանից եկած կամավորների հետ, սկսեցին ոչնչացնել թուրք ազերիների բնակավայրերում տեղակայված կրակակետերը և դրանցից ազատել հայկական տարածքները:

Ազերիները 1992 թ. սկզբից մեծ ուժեր էին կենտրոնացրել Շուշիում, Աղդամում, Ֆիզուլիում և այլուր, որոնց շարքերում կային բավականին վարձկաններ: Շուշիից և հարևան ազերիների բնակավայրերի կրակակետերից անընդհատ հրետակոծվում էին հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը և մոտակա հայկական բնակավայրերը: Այդ կրակակետերի ոչնչացումը դարձել էր գլխավոր խնդիր: Դեռևս 1990 թ. մարտին Լեռնային Ղարաբաղում կազմակերպվել էր ինքնապաշտպանական ուժերի մարզային շտաբ: Այդ շտաբը 1991 թ. գարնանը նպատակահարմար գտավ մարզի տարածքում գործող բոլոր ինքնապաշտպանական ուժերը միավորել և ստեղծել մարտական ստորաբաժանումներ: Մարզի բոլոր հասուն տղամարդիկ, պատանիներ ու կանայք մտան ինքնապաշտպանական ջոկատների մեջ: Այսպիսով,

<sup>1</sup> Տե՛ս «Հնչակ Հայաստանի», Ա տարի, № 13-14, մայիս, 1991թ.:

<sup>2</sup> Տե՛ս «Երկիր», № 40, 5 մարտի, 1992:

Արցախում գործող կամավորական ջոկատների թիվը օրեցօր ավելանում էր: 1991 թ. նոյեմբերին Ստեփանակերտում տեղի ունեցած խորհրդակցությանը մասնակցեցին ԼՂՀ բոլոր շրջանների ինքնապաշտպանական ջոկատների հրամանատարները: Խորհրդակցությանը մասնակցեցին նաև Վազգեն Սարգսյանը և գեներալ Գուրգեն Դալիբալյանը: Այստեղ էլ որոշվում է Արցախում և Հայաստանում ստեղծել պաշտպանության բանակ և պաշտպանության պետական կոմիտե: 1992 թ. ամռանը ռազմական դրությոն հայտարարվեց ԼՂՀ ողջ տարածքում: Օգոստոսի 15-ին ստեղծվեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտե, որի նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը, շտաբի պետ՝ Արկադի Տեր-Թադևոսյանը: Արցախ-Հայաստանում գործող մարտական բոլոր ստորաբաժանումները մտան մեկ ընդհանուր հրամանատարության տակ<sup>1</sup>:

Արցախի երկրապահ կամավորական ջոկատների գործողությունները հետզհետե դարձան ավելի վճռական: Նախ՝ 1991 թ. հոկտեմբերիվերջին ազատագրեցին Տող, ապա՝ Կրկժան, Մալիբեյլու, Ղարադաղլու, Խոջալու բնակավայրերը և վերացրեցին այդտեղ տեղադրված կրակակետերը:

Փաստորեն 1992 թ. սկզբից բացահայտ ընթանում էին հայ-ադրբեջանական պատերազմական գործողություններ, որին մասնակցում էին տասնյակ կամավորական ջոկատներ: Հունվարի 26-ին մինչև ատամները զինված 250 ազերիներ զրահամեքենաների օգնությամբ մոտեցան Շուշիի շրջանի Քարինտակ գյուղին: Գյուղի պաշտպանության դիրքերում գտնվող 60-70 ազատամարտիկները ամբողջ օրը հերոսաբար դիմադրում էին հակառակորդի գրոհին: Հակառակորդը, թողնելով 74 սպանված և 70 վիրավոր, ստիպված էր նահանջել: Հայերից զոհվեցին 18 հոգի, այդ թվում ազատամարտիկներ Ս. Հայրյանը, Վ. Առուշանյանը և ուրիշներ: Քարինտակի մարտերում իրենց հերոսությամբ աչքի ընկան երկրապահ կամավորական ջոկատները: Իսկ 1992 թ. փետրվարի 26-ին Խոջալուի ազատագրումը հայ ինքնապաշտպանական ուժերի փայլուն գործողություններից մեկն էր: Ազերիները Խոջալուն արագորեն դարձրել էին հենակետ, որը փակել էր Ասկերանի ու Մարտակերտի հետ կապող ճանապարհը: Համաձայն Խոջալուի ազատագրման ռազմավարական պլանի՝ մարտերին մասնակցեցին Հրազդան քաղաքի երկրապահները՝ Սասուն Միքայելյանի հրամանատարությամբ, Սևանի ջոկատը՝ Սուրեն Սարգսյանի հրամանատարությամբ, Երևանի «Մալաթիա» ջոկատը՝ Հակոբ Հակոբյանի գլխավորությամբ, «Սասուն» ջոկատը՝ Ալֆրեդ Ներսիսյանի հրամանատարությամբ, Մասիսի ջոկատը՝ Գնել Մանուկյանի, Հայոց ազգային բանակի ջոկատը՝ Արամ Թորգոմյանի, Ալաշկերտի ջոկատը՝ Ալբերտի հրամանատարությամբ, և այլն: «Սասուն» ջոկատին հրաման էր տրված Հրազդանի, Սևանի, Մալաթիայի ջոկատների հետ Խոջալու մտնել Մեհթիշենի կողմից: Նորագյուղի ուղղությամբ պետք է մտնեին «Արամոյի» և «Արաբոյի» տղաները, իսկ օդանավակայանի կողմից Սմբատ Հակոբյանի ղեկավարած Ղարաբաղի ջոկատը:

Խոջալուի գործողությունը, որպես հայ կամավորական ուժերի համատեղ գործունեության հոյակապ օրինակ, փայլուն իրագործվեց: Խոջալուի վերացումը պատմական անհրաժեշտություն էր: Այդ գործողությանը մասնակցած կամավորական բոլոր ուժերը դրսևորել էին հերոսության վառ օրինակներ: Խոջալուին հաջորդեց

<sup>1</sup> Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, № 3, էջ 127:

Շուշիի ազատագրումը և Գորիսի հետ միացնող ճանապարհի բացումը: 1992 թ. մայիսի 8-9-ը իրագործվեց Շուշիի ազատագրումը և այնտեղի կրակակետերի վերացումը, որին, ըստ Արկադի Տեր-Թադևոսյանի հրապարակած ցուցակի, մասնակցել է 2850 հոգի<sup>1</sup>, որոնք ընդգրկվել էին 80 ջոկատներում: Շուշիի ազատագրման և միջանցքի բացման համար, բացի Արցախի ինքնապաշտպանական ուժերից, մասնակցել են նաև Հայաստանից այստեղ եկած ջոկատները, որոնց թիվը հասել է 40-ի՝ «Արամ Մանուկյան», «Ադանա», «Ալաշկերտ» (Արտաշատ), «Արամո», «Դաշնակցություն», «Ջորավար Անդրանիկ» (Մարմարաշեն), «Ջորավար Անդրանիկ» (Երևան), «Կունայրի», «Մերգեյան», «Խոսրով աղա», «Կոճոռ», «Սասունցիներ», «Սասնա Օճեր», «Աֆղանցիներ», «Գարեգին Նժդեհ», «Խաչակիրներ», «Սասունցի Դավիթ», «Տոռոզյան» և այլն:

Գետաշենի անկումից հետո տասնյակ կամավորական ջոկատներ հանգրվանել էին Շահումյանի շրջանում, որտեղ ակտիվորեն մասնակցել են շրջանի պաշտպանական գործողություններին: Առանձնապես լավ են գործել «Արաբո», «Ալաշկերտ», «Տիգրան Մեծ» ջոկատները<sup>2</sup>: Շուշիի ազատագրումից հետո հակառակորդը, ուժերը կենտրոնացնելով Շահումյանի շրջանի ուղղությամբ, հունիսի կեսերին ներխուժեց այնտեղ, որինոտ 16 հազար բնակիչներ ստիպված էին բռնագաղթվել Արցախ և այլ շրջաններ: Շրջանի բնակչությունը իր օրրանից հեռացավ երկրապահ ջոկատների և ինքնապաշտպանական ուժերի օգնությամբ: Գետաշենն ու Շահումյանը իրենց իրավունքների համար մաքառեցին շուրջ 1000 օր: Թուրք ազերիները, ներխուժելով Շահումյանի շրջան, սրիուհրի մատնեցին Էրթեջը, Մանաշիդը, Բազլուխը և այլ հայկական բնակավայրեր: Այդ դաժան ու ահեղ օրերին Շահումյանի շրջանում զոհվեցին 324 խաղաղ բնակիչներ և 75 ազատամարտիկ: Թուրք ազերիները նպատակ ունեին Շահումյանի շրջանը բռնագրավելուց հետո ուժերը կենտրոնացնել Մարտակերտի շրջանի ուղղությամբ: Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Շահեն Մեղրյանը ամեն կերպ փորձում էր բոլոր ուժերը միավորել և դիմակայել թշնամուն: Սակայն ոչ բոլոր կամավորական ջոկատներն էին ցանկանում կատարել նրա պահանջները: Դրա հետ կապված մի շարք օրինակներ է բերել Շահումյանում գործած զնդապետ Դերենիկ Բաղդասարյանը 1998 թ. հրատարակած իր «Դիմակայություն» հուշագրության մեջ:

Արցախի հյուսիսային դարպասները պաշտպանելու համար այնտեղ էին մեկնում նորանոր ջոկատներ՝ Սոնթե Մելքոնյանի «Հայրենասիրական ջոկատը», «Աշտարակի երկրապահը», Ալավերդու կամավորական ջոկատը, Գրիգորի ջոկատը, «Ջերմուկը», «Կոնդը», «Հողաբերդը», «Արգավանը», «Նիկոլ Դումանը», «Շենգավիթը» և այլն:

Շահումյանի շրջանը թշնամու կողմից բռնագավթվելուց հետո այնտեղ կազմակերպվել է «Եղնիկներ» պարտիզանական ջոկատը, որը զլխավորում էր Շահեն Մեղրյանը: Ջոկատի շարքերում հերոսաբար մարտնչել են Հայաստանից հարյուրավոր կամավորներ:

Արցախյան պատերազմի տարիներին չափազանց ծանր պայմաններում էր գտնվում Արցախի Մարտակերտի շրջանը: Շրջանի տարածքի զգալի մասը հակառակորդը զավթել էր և ենթարկել թալանի ու ավերածության: Շրջանը ԼՂՀ-ի համար

<sup>1</sup> Տե՛ս «Հայ զինվոր», № 17-25, 2001:

<sup>2</sup> Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, № 3, էջ 126-127:

ուներ տնտեսական կարևոր նշանակություն, բնական մեծ հարստություններ՝ քարածուխ, ցինկ, կապար, պղինձ. ոսկի, երկաթ, գրանիտ, սպիտակ և վարդագույն տուֆ և այլն: Շրջանի տարածքում կան շուրջ 1100 հայկական ճարտարապետական հուշարձաններ: Այս ամենը բռնազավթելու համար ազերիները կանգ չէին առնում ոչ մի բարբարոսության առաջ: Հայոց այդ տարածքը պաշտպանելու համար Հայաստանից մեկնեցին տասնյակ երկրապահ կամավորական ջոկատներ, իսկ 1992-ի օգոստոսի վերջին այնտեղ հասավ մահապարտների գումարտակը: Այդ բոլոր զորամիավորումները մինչև պատերազմական գործողությունների դադարեցումը՝ 1994-ի մայիսը, տալով բազմաթիվ զոհեր՝ դիմակայեցին մի քանի անգամ ուժեղ հակառակորդին, որը այդտեղ էր կենտրոնացրել ավելի քան 7000 զինվոր և վարձկան, շուրջ մեկ տարի շրջանը պահել էր ան ու սարսափի մեջ:

Մահապարտների գումարտակը դիմացավ հակառակորդի առեւտրի ճնշմանը: Սերժ Սարգսյանը շեշտել է, որ մահապարտները «ոչ միայն փայլուն հաջողությամբ կատարեցին իրենց մարտական առաջադրանքները, այլև նպատակների ու ոգու միասնականության ամենախոսուն հաղթանակը տարան: Հենց դրանով էլ ընդմիջտ մնացին ազգային-ազատագրական հերոսական պայքարի էջերում»<sup>1</sup>:

Մինչև պաշտպանության բանակի կազմավորումը, կամավորականները մեծ դեր խաղացին 1993-ի հունիսի 28-ին Մարտակերտի ազատագրման պայքարում: Մինչ այդ, նույն թվականի հունվար-փետրվարին, մարտական գործողություններն ավելի էին թեժացել Մարտակերտի շրջանի հյուսիսարևմտյան հատվածում, որտեղ ինքնապաշտպանական կամավորական ուժերը կարողացան իրենց վերահսկողության տակ վերցնել Մարտակերտ-Քելբաջար մայրուղին, ապա ազատագրել Քելբաջարի շրջանը: Ալբերտ (Հայրիկ) Ղազարյանը իր «Հիսուն օր Արցախում» գրքում պատմում է, որ 1993-ի փետրվարի 23-ին իրենց կամավորական ջոկատը մասնակցել է Արցախի ինքնապաշտպանական մարտերին: Այդ ուղղությամբ գործող ինքնապաշտպանական և կամավորական ուժերը ազատագրեցին յոթ բնակավայր, և Քելբաջարը հայտնվեց օղակի մեջ: Հայկական ուժերը կասեցնում են հակառակորդի բոլոր ջանքերը և մինչև վերջ իրականացնում Քելբաջարի ազատագրումը: Հայ ազատամարտիկները ապրիլի 3-ին մտան Քելբաջար: Ակնհայտ է, որ Շուշիի ազատագրումից և Հայաստանի հետ ցամաքային կապի հաստատումից հետո հայրենիքի սահմանների պաշտպանության ողջ ծանրությունը իրենց ուսերին կրած կամավորական ջոկատների գործունեության համար սկսվեց նոր փուլ: Ի սկզբանե ինքնաբուխ ստեղծված և մասամբ կանոնակարգված կամավորների գործողությունները դարձան կազմակերպված, ուղղորդվեցին որոշակիորեն համակարգված և ծրագրված հունով: Վերջապես կամավորական ջոկատները պետք է միավորվեին բանակային կառույցներում: Հարց առաջացավ ստեղծելու կամավորական բրիգադ, որը պետք է կամավորական բազմաթիվ ջոկատներ միավորեր և ստեղծեր հարվածային բռունցք: Այն պետք է կարողանար բեկում մտցնել Մարտակերտի ռազմաճակատում և զինական ուժերն ու նրանց գործողությունները դարձնել լիովին կառավարելի, բացառել հրամանների քննարկումն ու ինքնագործունեությունը, կամավորական ջոկատները հեռու պահեր ներքաղաքական և միջկառավարական հակասություններից, սովերային տարբեր խմբավորումների ազդեցությունից<sup>2</sup>:

<sup>1</sup> Գ. Ջանիբեկյան, Մահապարտները, Երևան, 2002, էջ 7:

<sup>2</sup> Տե՛ս «Երկրապահ», № 52, 6 օգոստոսի, 2002:

Ընդհանրապես Մարտակերտ-Քելբաջար տարածքի ազատագրման գործում կարևոր դեր են խաղացել երկրապահ կամավորական ջոկատները: Այդ ժամանակաշրջանում միայն Մարտակերտի շրջան են մեկնել 102 երկրապահ կամավորական ջոկատներ: 1992 թ. հունիսի 27-ին շրջանի Հասանդայա տարածքում անհետ կորել են 79 ազատամարտիկ, որից 22-ը «Արաբո» ջոկատից, 19-ը՝ Արցախի կամավորականներից, 7-ը՝ «Ձեյթուն» ջոկատից, 28-ը՝ Արմավիրի երկրապահներից: Պարզվում է, որ նրանք բոլորն էլ հերոսաբար կռվելու զոհվել են և թաղված են ներկայումս անհայտ տարածքում<sup>1</sup>: Շենգավիթի երկրապահ կամավորական ջոկատից մի խումբ 1994-ի ապրիլի 21-ին Կարմիրավանում անցնելով հարձակման՝ հայտնվում է շրջափակման մեջ: Երբ վերջանում են փամփուշտները, բռնցքամարտիկ Արշակ Ղամբարյանի զխավորությամբ ազատամարտիկները դուրս են գալիս ձեռնամարտի: Տասնհինգ ազատամարտիկներից փրկվում է միայն Հրաչ Հարությունյանը, տասնչորսը հերոսաբար զոհվում են, նրանք հիմա կողք-կողքի ննջում են եռաբլուրում<sup>2</sup>:

Հայաստանի կամավորականները մեծ դեր են խաղացել նաև Ասկերանի, Մարտունու և Հադրութի շրջանների պաշտպանության համար մղված մարտերում: Ասկերանի պաշտպանությանը մասնակցել են Հայաստանից այստեղ մեկնած 43 կամավորական ջոկատներ՝ «Ազգային լեգեոն», Ախուրյանի ջոկատ, «Այգևան», «Ավշար», Գուգարքի ջոկատ, «Դավիթ Բեկ» և այլն:

Մարտունու և Հադրութի շրջանների համար հերոսական մարտեր են մղել 91 երկրապահ կամավորական ջոկատներ՝ «Արաբո», «Ձորավար Անդրանիկ» (Մարմարաշեն), «Իքս», «Կոճոռ», «Մալաթիա», «Տիգրան Մեծ» և այլն: Քաջաթաղի շրջանի և միջանցքի պաշտպանությանը մասնակցել է 74 ջոկատ՝ «Արաբո», Ապարանի երկրապահ, «Ադանա», «Ասպետ», «Ավշար», «Արամուս», «Արամ Մանուկյան» (Արարատ), «Բալախովիտ», «Գառնի» և այլն:

Այսպիսով, Արցախի պաշտպանության գործում կարևոր մասնակցություն են ունեցել Հայաստանում կազմակերպված բազմաթիվ կամավորական ջոկատներ: Նաև նրանց անձնուրաց և հերոսական խիզախումների, մեծագույն զոհերի ու մարտիրոսության շնորհիվ հնարավոր դարձավ Արցախյան պատերազմում փառավոր հաղթանակն ու հայոց հինավուրց երկրամասի ազատագրումը ադրբեջանցի հրոսակներից:

*Рузанна Мовсесян, Добровольные отряды в боях защиты Арцаха.* - В данной статье кратко изложена героическая борьба добровольных отрядов Армении и Арцаха в деле защиты исторической родины против азербайджанских войск.

*Ruzanna Movsesyan, The volunteer detachments in the struggle of protection of Armenia and Artsakh against Azerbaijanian troops.* - The article presents in short the heroic battle of the Armenian and Artsakh volunteer detachments and defence for the historical fatherland against Azerbaijan's army.

<sup>1</sup> Տե՛ս «Առավոտ», № 85, 22 մայիսի, 2008:

<sup>2</sup> Տե՛ս **Հ. Հակոբյան**, Հաղթանակի բրիգադը, Երևան, 2003, էջ 9: